

Նորոգեալ ի Սէթ կրօնաւորէ . . . .	1251
Քարաշամ Ս. Աստուածածնի վանք (Աղքիլիսէ) ի նիզ զաւառի, ի Մամայ խաժունէ յամուսնոյ Վաչէ իշխանի . . . .	1211
Օձայ Ս Աստուածածնի վանք ի Տառ շիրս, շինեալ ի Յովհան իմաստափրէ . . . .	735
Օշականայ ուուրբ Մեսրովք թարգմանչի հկեղեցի Յնրազածոտն, ի Վահանայ Ա- մատունոյ . . . .	441
Նորոգեալ ի Պարոն Սահմատինէ . . . .	1277

ԱԲԷԼ. ԱՐՔԵՊԻՏԵԿՈՂՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՏ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԴԱՄԱԶՆԱՌՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԲՆԱՉՆԱՌՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՑ.

(ԱՆԱՏՈՄԻԱ ԵՒ ԳԻՉԻՕԼՈԳԻԱ)

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՂԵԿ-ՇԽԱՆ:

Ի տես մի կենդանի է ակի, մենք նախ և յառաջ նշմորում ենք նորա ձեն, կազմակերպութիւնն, օրդանական կազմուածքըն և սոցա կենդանական գործողութիւնքըն:

Ենտոպիան (ana temno. անդամահատել) ուսուցանում է մեզ ճանաչել կենդանի էակաց կազմութիւնն:

Փիզիօգիկան (physis logos) ճառում է այն երեցթներն՝ որոց ամբողջութիւնից կազմակերպում է կեանքն:

Կենդանի էակի. — Բոյսերն և կենդանիքը որոշողն բնութեան միւս մարմիններից՝ կետնին է. այս ներքին շարժականութիւնըն, որոյ իրողութիւնն անծանօթ է մեզ, թէև նորա ներզործութիւնքն հարուածէին մեր զգայականիքն: Ոխայն կենդանի

էակնց կպատկանի՝ իւրեանց տեսակներից արդիւնաբերելու, և զինի ծննդառութեան մի ժամանակամիջոց և մի սահմանեալ ձեռվ ապրելու կարողութիւնն, քարշելով գետ իւրեանց բաղադրութիւնքն օտար գոյացութիւնք և դարձնելով արտաքս իւրեանց յատուկ գոյացութեան մի մասն: Եյս փոխանակութիւնն, այս շարժողութիւնն նիւթերի, որ բնալուծվում է գետ յարտաքին աշխարհը՝ կազմում է սպացութեան (nutrition), որոյ ներմանային աշխատութիւնն անտեսանելի է մեզ, թէև էութիւնն յայանի՝ անթիւ իրողութիւնն ներով: Խօսելով վասն կենդանեաց, մանուկն իւր ծննդառութեան ժամանակ կշռում է միջնահաշուռով Յ հազարամեթր, և 25 տարուց յետոյ, յերիտասարդութեան, իւր կշիռն անցանում է յիսուն հազարամեթրից:

Ո՞ի քանի ժամանակ յիտ մնալով սընունդից, մարմինն վտիտանում է, կշիռն նուազում է, ուրեմն նա թոյլ է տուել իւր հիւթանիւթի մի մասն և կորուսան զգալի է եղել այն պատճառաւ՝ որ նա դարմանել չէ նորան անդառութեամբ:

Անկտօրիուս, որ իւր կենաց մի մեծ մասն կշռքի մէջ անցուց, հաստաել է իւր զննողութեամբք, որ անդասայտար արտաշնչ-նի-ն (transpiration mensil) կամ արտաշնչ-նի-ն (peropiration) պատճառում է մարդկային մարմինն մեծաքանակ կորուստ: Կա գտել է՝ որ եօթն ժամուայ միջոցում 1 հազարամեթր արտաշնչութիւն է լինում:

Ո՞ի առողջակեաց և միջակահատակ մարդ կորցնում է իւր կշռից հանապարոր 2ից մինչ 3 հազարամեթր, հովուային (cuta-

ո՞ն, լուտոյին (pulmonaire,) երիկամանց (rénal.) և աղիների (intestin,) արտաթօրութեանց զօրութեամբ:

Խ հակիրծքան, երբ մի կենդանւոյ սընուցանեն հօւն մի ժամանակ տօրոնիս, նորա ոսկերքն կարմիր գոյն կընդունին, ապա եթէ գագարեցնեն տօրօնի կիրառութիւնն, կարմիր գոյն կնուազի և ի վերջո կանչեանաց մի որոշեալ ժամանակամիջոցում:

Ապահովելու-նիւնն է կազմուածքի մի ուրոյն ձևն, որով հաւաքվում են անհրման մասերն, որք և ձևացնում են կինդանի էակաց մարմինն: Այդ պատճառաւ օբյեկտական կամ գործարանաւորական մարմին՝ յորջորջու մն տալիս են այն էակաց, որոց տուհալ է կեանք. իսկ ընդհակառակը անօբյեկտական մարմին՝ որոնք զուրկ են կեանքից:

### ՈՒՆԿՆ ԲՆԱ-ՆԻ-Ն+Շ-Ա-Ա-Յ

#### Լ ՀԵԿՏԱՆԵԱՅ:

Օրդանական մարմինների քիմիական տարերքն վերաբերում են ամբողջ բնութեան: Վակայն ջրածինն, թթուածինն, ածխաթթուն և բորակածինն այդ էակաց քիմիական բաղադրութեանց մէջ մեծ մասն ունին:

Քոյսերի էական բնութիւնն ածխաթթթուն է, իսկ կենդանեաց՝ բորակածինն:

Քոյսերից կենդանիներն որոշող զարմանալի բնութիւնն այն կարողութիւնն է, որով զգում է կամ թէ ընդունում է ապաւորութիւնք, և որով զործագրում է ինքնուրոյն շարժականութիւնքն: Այդ ինքնուրոյնութիւնից՝ ներքին կամքից,

որին անուանում են Լատինացիք anima (շունչ), յառաջացել է լատ-ու (կամ կենդանի) էակ անունն, որ յառուկ է շընշաւորաց, և անէնդան էակ անունն, որ յառուկ է բոյսերին:

Անդանէական ջերմու-նիւն: — Գառծարանաւորական էակաց յառաջութիւնն է ջերմութիւն արդիւնաբերել: Պ. Գուարօշէ ապացուցել է որ և ի տունկս նոյնպէս երեւում է ջերմութիւն: Բայց առաւելաբար կենդանական թագաւորութեան մէջ նկատել է այդ երկոյժնն, յոյր սակս առաջացել է անունս կենդանէական ջերմու-նիւն, որ տալիս են նորա արդեանց, և շղիտէին՝ որ առաւել ձշզրիտ կլինէր կոչչել օբյեկտական ջերմու-նիւն:

Կենդանեաց մեծ մասն այնքան փոքր քանակութեամբ ջերմանիւթ (calorique) ունին, որ միայն մանրազննին նկատողութիւնը, կարեն տեսանել: Եթէ գնես մի ձուկի գողաչափի մէջ լի 0° իսաւոցվ, մինչ երեք ժամ չես տեսանելու տառուցի մեծագանակ հալեցողութիւնը, բայց եթէ մի և նոյն թէութեամբք դնես մի ձագար, այն որոշեալ ժամանակում 500 գրամ սառուց հեղուկի գործած կը տեսանես:

Այդու ամենայնիւ շունակը, Պատիք, Գէսրէց և այլք գաել են, որ ձկանցներքին ջերմաստիճանն առաւել էր քան ջըրին: Ապ ոլլանդանին ապացուցել է որ եթէ միայն մի խղնջուն բաւ չէ աղջեցութիւն գործել ջերմաչափի վերայ, այդ կենդանիների մի մեծ մասն միատեղ կարողանում են զգալի կերպիւ նորան վերաբրացնել: Վէլոնի, Պատիք, Պէրթողդհաստանել են, որ ի միջատս նոյնպէս տեսանելի է ջերմութիւն:

Ասկայն կենդանեաց մէջ կայ ջերմաստիճանութեան մի զանազանութիւն, որ բաւական է ծշմարտելու համար տալ պաղպարիւն կենդանի անուննե, այս անուամբ յայտնւում են այն կենդանիքն՝ որոց ջերմաստիճանն համահաւասար է այն բանի միջի ջերմաստիճանին, որոյ մէջ ապրում են, մինչդեռ բաւարիւն կենդանի անուամբ նըշանակվում են նոքա՝ որոց ջերմաստիճանն առաւել է քսան մթնոլորտինն: Բացի սմանէ, երկոցունց ջերմաստիճանն ես գրեթէ աև ողական է: Մարդոյ և այլ ուսնաւոր կենդանեաց ջերմաստիճանն փոփսխվում է  $36^{\circ}$ ից մինչ  $40^{\circ}$ : Թուշունների մէջ նա բարձրանում է մինչ ի  $42^{\circ}$ :

Ըստ Ռուբրաշի, մարդկային արիւնն բովանդակում է յինքեան  $36^{\circ}$ ից մինչ  $36^{\circ} 2$  ջերմաստիճան, մարմնոյ ներսում: Ենիկջականապէս սրտի առագաստի հետ յարակից օրդանների մէջ՝ ջերմաստիճանն շատ առաւել է:

Ուստիութեան գործողութիւնն առեցնում է կենդանեաց մէջ ջերմութիւնն, սաստիկ յուղմունքն առաւելացնում կամ նուազեցնում են նորան:

Գործարանառութեան. (organisation.) Օրգանոն (organon, գործիք) կոչվում են այն մասերն, որոց գործողութիւնից կան են կենդանական երեսյթներն: Երբ բազում օրգանք գործակցում են արտադրել մի երեսյթ, այդ գումարումն յորջորջվում է անուամբս կապնութեան (appareil). Արակամ մի օրգանի գործողութիւնն կոչվում է պաշտօն (fonction, ֆոնկցիա):

Պաշտօնք կարեն բաժանուիլ յերիս դասաւ:

Շանութական և սպածման պաշտօնքն, որք ապահովացնում են աղգատոհմի յարատելութիւնն և մարմնոյ պահպանողութիւնն, կարեռոյ վասն բոլոր կենդանին էակաց, և կազմում են աճեցական (végétatif) կեանքն: Յարակցական պաշտօն՝ որ ծառայում է հաստատել յարակցութիւնը ի մարդիկս, որոշողք անասուններից, և կազմում է կենդանական կեանքն:

Բայց գործիքներն և կազմութիւնքն բաղմաթիւ են այնքան, որքան պաշտօնք ամփափեալք են: Յանասուննա, առ որս կեանքն ամենապարզ է և որոց կարողութիւնքն խիստ կուպարաւորեալք են, մարմնոյ կազմութիւնն ամենուրեալք մի և նոյն է, և միոյն մի օրգան կայ՝ այն է մարմինն, այն էակն, որ հետեւելով Մ. Խղվարդի հնարագէտ համեմատութեան, ամենին նման է մի գործատան, որոյ բոլոր գործաւորքն զբաղվում են մի աեսակ աշխատաւթեամբ, և որպէս որ՝ եթէ անջատէին այդ գործաւորներին ի միմեանց, այդու ամենայնիւ նոքա կատարելու են իւրեանց գործն, և իւրաքանչիւնն ինոցանէ կարող երլինել կենդրոն մի գործատան, այդպէս է եթէ բաժանեին այդ անասունքն ի բազում մասուննա, մէն մի մասն կը շարունակէ ապրել, մնունգ առնել, զարգանալ երնդ փոյժ կազմել մի նոր կենդանի այնպէս կատարեալ, որպէս միւսն, որից ինքն յառաջ է եկել: Պարզ էակաց և նոցա մէջ՝ որոց գործարանառութիւնն շատ խառնուածու է, կայ մի անհուն անջրպեա, բայց միջնական աստիճաններով: Կոյա այց ելանելով՝ գու կտեսաւես օրգանների բազմանալը թուով և պաշտօնների հայտնալը, այս ինքն՝ իւրաքանչիւնքը օրգան մարմ-

նի մէջ մի տուանձին տեղ ունի բռնած.  
Երբ որ նորանից բաժանեն, կենդանին կո-  
րաւանում է իւրպաշտօնների մինն, և այդ-  
կորսափց յառաջ է գոլիս օրդանակա-  
նութեան մէջ մի խառնակութիւն, հա-  
մեմատական այդ սպաշտօնի կարևորու-  
թեան, ի մասին սպահովողութեան կե-  
նաց:

**Կենդանեաց մարմինն բաղկացած է հաս-**  
**պատուածից (solide) և հաստուածից (liquide):**

**Հաստուածութեան կազմում են օքանական**  
**հիմքածութեան (tissu organique,) կոչուածին:**  
**Ոքքան որ այլակերպ են երեսում այդ հիմ-**  
**ուածքն, սակայն այնքան համեմատու-**  
**թիւն ունին միմեանց, որ մանրադիտավ**  
**բարւոք կը ելով, բոլորն երեսում են ձեւա-**  
**ցած փոքր ոլուներից պոտկաձեւ, միայն**  
**իւրեանց յօրինուածութեամբ զանազա-**  
**ներով: Այդու ամենայնին նկատելի են**  
**հինգ զլիսաւոր օրդանական հիւսուածք:**

**1-ն Խորշնաձեւ\***) հիւսուածն (tissu cel-  
lulaire,) որ իւր մաղատեսակ անկուածի  
համար այդ անունով է ընդունել: Վ. մենա-  
պարզ անասնոց մէջ գրեթէ մարմնոյ ամ-  
բողջութիւնն է կազմում և գործակից է  
ընում մարդոյ մէջ բոլոր օրդանների ձեւա-  
ռութեան: Կորա թանձրութեան մէջ ի  
սպահեստի կայ Ճարպն, մի տուանձին կը դ-  
կրդանք, որին տուել են անունս հիմքածու-  
թարդառութ:

**2-ն Միականական (դնդերական) հիմ-**  
**քածն, ռամկօրէն կոչուած մը ճարդոյ:**  
**Դա արտադրիչ գործող է շարժողաւ-**  
**թեանց, նա կազմվում է ներդերից, ո-  
րոնք ընդունակութիւն ունին կը ուելու**

կծկութեամբ: Այդ ներդերն կազմելով  
խուրձեր, առնում են անունս մը ակուլ-  
(դնդերք, մկունք):

**3-ն Կետարդարար հիմքածն, որ որոշ-**  
**վում է միւսկուլական հիւսուածից իւր**  
**քիմիական և ֆիզիքական բնութեամբ,**  
**և մանաւանդ որ չէ նա կարկամոլ: Կա-**  
**ձեացնում է յշպանելը (tendon,) և ակա-**  
**պաս նաղանդը (aponeurose) և յօդակապքն**  
**(ligament,):**

**4-ն Ոսկրեղէն հիմքածն, վիմային**  
**կազմուածութիւնից ձեւած գելատինից**  
**և կրային փոսփորաթթութից (phosphate de**  
**chaure) առնելով երեմն մի մաղատեսակ**  
**դրութւն, և երբեմն հոծ՝ որպէս փղոսկր:**

**5-ն Գլային հիմքածն, կայան զգա-**  
**յական կարստութեան, որ մի կակուղ հե-**  
**ղանիւթ է հասարակօրէն սպիտակագոյն,**  
**և յօդաւորում է ոսկըն (encéphale,) և ջե-**  
**ղերէն (nerf,): Այդպարդ համարում է**  
**մաղատաւոր (mucoseure) և լճախտոն (séreure,)**  
**թաղանդներն, նոյնպէս ներդերապատ և**  
**ոսկրեղէն հիւսուածքն՝ որպէս կերպա-  
րանք մաղատաւուակ հիւսուածքին:**

**Հաստուածութ լուծանվում են ջրի՝ ի**  
**լուծման և ի կախման (կախ լինել) պա-**  
**հելով բազում հեղանիւթք. հիւսուածք**  
**նոցա գոյացութեան պարտաւոր են իւր-**  
**եանց կակութիւնն մինչ անդամ իւր-**  
**եանց թանձրութեան մէջ: Աստի է օր-**  
**գանական հիւսուածոց խուռանքիւնն, և ն-**  
**թակայ ցամաքեցութեան, և հնարաւո-  
րութիւնն վերադարձնելունոցա իւրեանց**  
**կակութիւնն վերսարին խոնաւեցնելով:**  
**Մարդկային մարմինն պարունակում է**  
**յինքեան գրեթէ 9|10-ն հոսանուա իւր**  
**կշռից. ուրիմն հոցում չորացնելով մի**

(\*) Կամ խորանաւոր:

մարմին, որ կշռում է 60 կիլոմետր, տասն և հօթն օր ժամանակամիջնոցում կը նուազէ կշռում մինչ ի 6 կիլ:

Գլխաւոր հոսանքուոք են.

Ա. Աբեղն, որին վերաբերելի են գրեթե բոլոր այլք, թե իւր բազմդրութեան մէջ մանելու վիճակած լինելու՝ և կամ նորան պատկանելու աղադաւ:

Ի. Ե-էլլ լոմբե, որ իւր ֆիզիքական բնութեամբ շատ նմանութիւն ունի արեան բնութեանց հետ, և որ երեխ լինել մի անկատար արիւնի նման:

Յամենայն կենդանիս արիւնն միանեսակ չէ, մարդունը կարմիր է, որ մանրացիակ միջնոցաւ երկու որոշակի մասի է բաժանվում. — 1-ն մի գեղնագոյն և թա, փանցիկ հոսանուոտ — չին (sérum). 2-ն բուրշի փաքրիկ շիկակարմիր կարծր մարմինք — արեան ալուստն: «Եսա տրամաչափն միջն հաշուով է 0 հոդար 0073: Իստ ու. Էդվարդի այդ ոլոռների որքանութիւնընըն ի յարակցութեան կայ ընդ կենդանական ջերմութեան: Ի թուզունս՝ որ քան զամենայն անասունս ունին առելի ջեր մասամիջան, որոք ձեւացնուամ են 14 կամ 15 հարիւրամասն արեան կշռի. ի մարդիկս և յօանաւորս փոփոխվում է 9ից ի 12 հարիւրամասն, մինչդեռ ի պատրիւն կենդանիս արիւնն ոլորի մէջ իւր կշռի 5 կամ 6 հարիւրերորդ մասն ունի:

Երիւնի 100 մասերի վերայ հաշվում են զրեթէ 78 ջուր, 7 ալբումին (ձուի սպիտակուց), 15 ներարդանիւթ, մի քանի հաղարամասն ճարագ և աղ և նշմարանք երկաթի առաւել օքսիդի:

Մարմինց գուրս՝ արիւնն բաժանվում է յերկուս որոշակի մասունս, մին զէլամի-

նաձի, հոծ, միատարր և կարմրերանդ, այն է մածոյծն (մատչղական արիւն, caillot), Երկրորդն՝ հոսանուոտ, զեղին հարեալ ի կանաչ՝ և լող տալով առաջնոյն մէջ, — այն է չին:

Մատչղականն զիսաւորապէս բաղկացած է ներգանիւթից և ներկազդյն նիւթից: Շաճի բաղադրութիւնն է զրեթէ միայնակ ջուր և հաւկմի սպիտակուց:

Ոչ մի հնարով չէ կարելի դադարեցնել արեան խառութիւն ընդունիլն. միայն կենաց վիճակի հետ իւր յօտիչ մասերն մընում են բոլորովին միացած, և խառութիւնըն կարէ համազուիլ՝ որպէս արեան մեռանիլն:

Մի քանի հիւանդութեանց մէջ երակից առած արիւնն անկատարելապէս խրտանում է: Վախական մազձացաւի մէջ, ընդհակառակին, արիւնն խառնում է առմենեին կենդանի, եթէ այդպէս կարելի է ասել, պատճառ՝ երբ բացում են երակն տենդի սարսուափ դարձի ժամանակ, տեսանում են՝ որ սառչողութեան վիճակից դուրս է եկել:

Ստածման պիտոյքն մատակարարել՝ է արեան առանձին պաշտօնն, նա պարունակում է բոլոր կարեւոր նիւթերն փասն կազման մարմնոյ հասաւառուն և հոսանուամասերի, այդ իսկ պատճառաւ նոսուցել է յատուկ անունո ճարմին հոսական:

Գրգիւեալ այդ հոսանուափն պարտաւոր են օրգանների կենդանական դրզութիւնն և զործունեան պահպանողութիւնն: Յորժամ որ և իցէ մասում՝ արեան ընթացքն ընդհատվում է այնպէս որ տածիչ հոսանուան չկարողանայ հոսանել մարմնի մի մասին, այդ մասդ փութով

կորուսանում է իւր զգայականութիւնն և զարկվում է մահուամբ, այդքանին հանդիպում են ծերունիք երբ նոցա շնչերտկքըն խնուելով ոսկեղին զանգուածով տեղեք չեն տալիս արեան:

**Աւճորդավետն կամ՝ արիւնահոսութիւնը,** թէ և սակաւարար լինի, տաթում է զգայական կարողութիւնների և շարժականութիւնների դադարում, իսկ եթէ շարունակաբար՝ բոլոր կենդանական երեւոյթների եղջում:

Եշրբ որ արեան ընթացքն առանց բոլորին ընդհատուելոյ մարմնոյ մի մասի մէջ՝ այն տեղ թուլանում է կոմ խափանվում է այնպէս, որ այն մասն չէ կարողանում ընդունել իրեն վիճակած արեան բոլոր քանակութիւնն, սատածութիւնըն պակաս ազդուութեամբ ներգործում է, տարածութիւնն և կենդանական հիւսուածքն նուազում են, այն ժամանակ ասում են՝ որ այդ հիւսուածք Ճիւնավետն վիճակի են ենթարկուել: Խոկ հականաբար, եթէ մի պատճառ յաձախեցնում է կամ որ և իցէ կերպիւ շալունակվում է արեան ժողովումն զէպ ի մի կէտ, սատածութիւնն եռանգիւ է կատարվում և երեւում է էպիբարօնիան (չափազանց աննգամութիւն):

Վարմնոյ մի մասի երկարատե հանդըստառութիւնն առեթում է յարաժամ առաջին իրղութիւնն, զոր օ. անդամի ծիւրութիւն, որ մի խորտակամն (ոսկըների) դատապարտելի է անգործունէութեան:

Վարմնամարդութիւնն յառաջացնում է ընդմիշտ խովերարապիս աւելի կամ պակաս նշանաւոր, այդ պատճառուաւ է, որ կարաւաց ստորին անդամներն ահազինս

զարգացած են լինում և բազկաշարժ զընդերքն այն դործաւորների՝ որ յաձախ հրահանգում են զայն, լինում են ստուարագոյն, զոր օ. հաց եփողներն, քարհանաներն և այլն:

**Ա ասն մացնելոյ տածողութեան տարերքն և կենդանական զգուականութիւնըն ի բոլոր մասունս, հարկ է որ արիւնն շրջան առնէ նոցա մէջ, և ահա շրջանական-թիւն կոչուածն այդ շարժողութիւնդէ:**

Որպէս զի արտաքին աշխարհից առած տածողութեան տարերքն կարողանան խառնութիւն արեան հետ և մանել օրդանների մէջ, որպէս է որ այդ տարերքն թափանցին անտեսութեան մէջ, որ և իցէ ջրաքամ լինին հիւսուածքներից, և այս վերջին երեսոյթս ստացել է անունս Ճիւնավետն:

**Յնացաղանական-թիւածք** (imbibition) հոսաննուաններն ծծվում են: Կենդանական խնայողութեան հիւսուածքն հոսաննուաններից թափանցականք են: Եյլպէս, եթէ լցնեն թթուազործ ջրով մի բեկոր երակ և նուրան վետեղին մի ամանի մէջ, որ պարունակէ իւր մէջ արեւածաղկի կապուա ներկըն, մի քիչ յետոյ տեսանեն՝ որ կապուա հոսաննուան փոխուեց կարմրի, թթուի հպեցողութեան միջոցաւ, որ նորան բովանդակօղ թաղանդի միջից անց է կացել:

Օննելով հիւսուածոց թափանցականութեան երեսոյթներն և հոսաննուանների խառնութերքն բաժաննուած թաղանդներով, Պ. Դիւտրօշէ իմացել է, որ երբ անհաւասար խառնութեամբ երկու հոսաննուարք, որպէս ջուրն և խժի լուծածուածն՝ այդպէս փորձուին, բազմիցս ստկաւախիտ

հոսանքութն վասնվում է և գալիս է միանալու ամենախստի հետ։ Եթէ ուրեմն խրժի լուծումն զետեղուի մի թաղանդաւոր մախաղում, որ ունենայ վերեւում մի խողովակ ընկղմօղ մի ջրալիք ամանի մէջ, ջուրն կը թափանցէ մախաղի մէջ և խառնուելով խժի լուծման հետ կբարձրանայ գէպ ի խողովակին, այնպէս որ ամենախստ հոսանքութի հարթաշափութիւնն կը լինի այն ժամանակ առաւել՝ սակաւախիտ հոսանքութի հարթաշափից։ Հոսանքութների ծծողականութեան սոյն հիտաքըքական երեսոյթ՝ ստոցել է համերեւոյն<sup>\*)</sup> արդիւնքերուն (Էնտոզմօղ, endosmose):

Երբ արիւնն կամ իւր ջրային բաժնի և կամ թէ իւր մէջ պարունակեալ լուծողական նիւթերի մի փոքրամասն թափանցուի հիւսուածներից և զեղուի խոռոչների մէջ կամ դուրս, հոսանքութ կամ շոգիացեալ վեճակում, ասում են լուսացանց կայ:

Երիւնն՝ կամ խոռոչների մէջ զեղուած և կամ հիւսուածոց թանձրութեան մէջ թափուած հոսանքութքն անհետանում են մի անորոշ ժամանակամիջոցում դարձեալ անտեսութեան միջոցաւ։ Եղնպէս և գործարանաւորութեան յօդիչ հիւլէներն, որ ծնունդ են առել արեան մէջ պլաստիկական (կերպարանիչ) գործողու-

թեամբ, վերագառնալով շրջանակութեան հեղեղից պարզեած մի ժամանակից յետոյ, այն առ վերստին չափուոր գումար են, թողնում են կղկղանքի ձեւի տակ իւրեանց գոյացութեան մի մասն, և այս անընդհատ փոխարկութեամբ ընդունում են փոխան առ փոխան ուրիշ նիւթեր իւրեանց մարմնի մէջ ի տեղի այլոց և դուրս են ձգում, մինչդեռ այլք փոխանակում են նոցաւ:

Վատի եղբակացնելի է որ, մի որ և իցէ ժամանակամիջոցում, ի մասին որոյ հեղինակք ոչ համաձայնին, մարմնոյ բոլոր հիւթանիւթն նորոգվում է։ Վյո առանձին ծծման երեսոյթն կոչվում է կրկնածընթաց-ներունքն։ Իւր գործողութիւնն ատրածվում է ոչ թէ միայն զեղեալ կամ յորդեալ հոսանքութների վերայ, այլ և որպէս առացինք՝ հաստատոն մասանց վերայ, յորս կինդանական գործունէութիւնն նրաւազում է, և որ փոխանակ արիւնից հանելու իւրեանց ստածման տարեբքն՝ գործակցում են ընդհանուր ստածողութեան ի մեջ իւրեանց յատուկ նիւթերի:

Ուրիմն, կրկնածծողութիւնն մինէ այն երեսոյթից, որը մըցումն յառաջացնել ծիւրութիւն։ Կրկնածծողութեամբ է որ տորոնիւն ներկետ ոսկեբքն վերստին ընդունում են իւրիսնց կանոնաւոր գոյնն, կրկնածծողութեամբ է որ դաշնակութեամբ ախտացեալ անձանց մէջ, լեզին՝ որ զեղնի է ներկում կաշի գոյնն, անհետանում է հուն ինչ ժամանակէն զինի:

Վիայն կինդանական հիւսուածք ենթակայ են կրկնածծողութեան։ Երբ մի օտար անլուծանելի մարմնն զետեղուած է

(\*) Վյո բառի ստեղծումն Պ. Դիտրոշէ զիտնականին ենք պարտաւոր, չդուսնելով զայն ոչ մի բառարանի մէջ, մեք համեմեւոյն արդիւնքներունքն թարգմանել յարմար դատիցինք, չպատասխանելով այդու ամենայնիւն նորա ստուգութեան և սպասելով, որ մերազնեայ զիտնականք մի աւելի ստոցդ և յարմար անուն գուանեն։ Թ.

անտեսութեան որ և իցէ կէտում, կարող է մնալ նա անդ անորոշաբար առանց իւր հաստութիւնն նուազեցնելու։ Տեսնուած է կապարեայ գնաակներ, որք բնակել են հիւսուածոց թանձրութեան մէջ առանց ենթակայ լինելոյ կրինածծողութեան, մինչդեռ ոսկըների բեկորքն գնաածե դործելով՝ երբեմն մինչ անդամ անշետանում են։

**Օ**νանօթ եմ մի շեռաւուրց անձի, որ ի բազում ամաց հետէ ունէր իւր ձախ բժամատի կակուղ մասումն մի փայտէ շիղ, և որովհետեւ այդ օտար մարմինդ բազմիցս ստատիկ կակիծ էր պատճառում նորան, մի օր բացեց բութն և կարի նեղութեամբ կարողացաւ գուրս հանել շիղըն, որ ունէր զրեթէ 2 հազարամեծք լայնութիւն 6. 7ի լայնութեան վերոյ, նորա զոյնն էր խիստ մոգ թութի, բայց անկիւններն այնքան իենդանի գոյն ունեն, որ կարծես թէ նախընթաց զիշերն էր մտել, և զիւրաւ ճանաչվում էր նորա մէջ կազնէ փայտի անկուած։

Երբ արիւնից անջատվում են նոր արդիւնք, որք նորանից որոշվում են իւրեանց բնութեամբ և ֆիզիքական յատկութեամբ, կամ որ պարունակում են առատութեամբ այնպիսինիւթեր, որերից միայն հետքեր են նշմարվում արեան մէջ, այդ աշխատութիւնն որպէս և ի նմանէ արդասաւորեալ արդիւնքն յորջորջվում են անուամբս կղիղան։

Մինք կաւսանենք միւս հոսանուաքն և այն գործարանքն, որոց հետ, մի առանձին յարակցութիւն ունին։

Վարդիային հարհն վէրայ ընդհանուր գաղափար։

**2.** Զննելով մարդկային մարմինն, աւանում ենք նախ մի ընդհանուր ծածկոյթ՝ որ պատումէ նորան ամրողապէս՝ այն է նորեն, որից կախ են եղունգներն և մազերն։ Ինդ ամենայն տեղիս, ուր ծակեր կամ ձեղքուածներ հաստատում են մի հազորդակցութիւն մարմնոյ ներսի և դրսի մէջ, մորթն ցողանում է նոցա շրջանակի վերաց, և իւր կազմութիւնն ամոքելով, գնում է կազմել մազասային նապանդ (membrane mucous). այսներքին մորթըն սահմանուած որպէս արտաքինն պահպաննելու գործարաններն, որ ծածկում է արտաքին գործակալաց կամ կղկղանաց ուղղակի գործողութեամբ։ Ոչ նուազ այլ կարեւոր պաշտօնք հասարակ են մորթին և մազասայնւոյն, դոքա են շողիացոլացումն և ծծողութիւնն։ Ի մէջ այդ երկու թաղանդաց համանմանութիւնն այն է, որ մորթն ստորագասեալ մազասաւորի մէջ լողացող հիւթերի երկարաձիգ շփեցողութեան, զոր օրինակ՝ արտօրի, առանում է իսկոյն մազասաւորի երեսյթն և բնութիւնն, որպէս որ և սա (մազասաւորն) զրուած հանդերձից շինցողութեան և ցամաքեցուցիւ օղի գործողութեան առաջեւ, կերպարանափոխվում է ընդհուպ մորթիի։ Եհա այդ է այն համամիաբանութիւնն, հազորդակցական կապն, որք յառաջ են գալիս նոցա հասարակ պաշտօնից, որոց մինն չէ կարօղ լինել ծանրապէս ըմբռնուած, առանց որոյ միւսն չզգաց ընդդիմահարութիւնն, զորո, որով վայնալուծութիւնն, որ յառաջ է գալիս

տարածական այրեցուածից, հարբուխն—պաղառութիւնից, վաս կամ բարի՝ բայց յարատե ազդեցողութիւնն ներքին զարմանողութեան մորթոյ հիւանդութեանց վերայ:

**Մորթոյ ներքե տարածվում է ճարպացն խոսնաւուր հիւանդում մի շարք, որ լցնում է գատարկներն և բոլորակացնում է ձեւերն, այն է ռամիօրէն կոչուածըն ճարպ: Մի քանի վայրերում՝ մկունք, որը սահմանուած են շարժելու, խառնը վում են ուղղակի մորթոյ հետ, դոքա են շարժածորդներնեւն (muscles peaucies). Ներքնամորթային խորանաւոր հիւսուածոց մէջ ուղում են երակներն և արտաքնաերեսյթ աւշալից ամաններն (vaisseau): Եյս վերջինքս շրջեալ անցանում են աստե անդ ուռեցողութիւնների միջեց, որ հաւաքուած են խմբով մի քանի կէտերի վերայ և որ անուանում են առ շալից գանգղին (\*):**

Խորանաւոր հիւսուածի ներքոյ զըտանվում են մուսկուլներն յարեալ առ միմեանս և միմեանց վերայ զըտուած, ու ծածկուած խողուցնող թաղանդներով գաղտակուր մարգարախ նման, հաստատուն, անարատ, որը բաժանում են մուսկուլական կարգերն և երբեմն անջտատում են մուսկուլներն ձգելով նորանց պատենի մէջ և հիւտելով նոցա տարածութեան մի որոշեալ կէտից: Եյտ [Մա-

ղանդներն են առօնէնութեալ կոչուածքն (\*): Երբ սոքա մի մուսկուլի տարածութեան վերայ կամ ներսը երեալով բազիացնում են նորա ծայրն զուգահեռական թելի ձեռվ, յորջորջվում են յէտան (tendon):

**Եյտ բոլոր մասանց միջումն առջնէն են մի յօդաւորեալ կազմուած, որոյ իւրաքանչիւր կառըն անկորանալի է, և պահում է իւրեան շրջապատղներին: Ուկններից ոչ շատ հեռու և ընդ հովանեաւ արտաքին գործակատարաց գտանվում են ջրզերի և ամանների զիմանար բուներն:**

**Մարմնի կատարում, գլուխն հանգրատանում է ողնաշարի (rachis) կամ ողնայալական սէան վերայ: Դա է մի ուսկերուամյթ, որոյ երկայնութեամբն կախ են ընկած վերին անդամներն և բունք կազմօզմասերն: Ողնայարակոն սիւնն պահում է բունին ուղիղ գծի մէջ և իւր ծանրութիւնն հաղորդում է ներքին անդամների: Գլխի ներսում նկատելի է մի խոռոչ զրեթէ ձուակերպ ձեւացած գանդի ոսկերային տուփից՝ որ պարունակում է իւր մէջ ողնակն և կուրուղնեղն (cervellet): այդ խոռոչն հաղորդակցում է մի անցքի հետ, որ փորուած է ողնաշարի խորութեան մէջ,**

(\*) Aponeurose ի Յունական բառէն Ապօնէօյրօզի (aponeurōsis) է այն սպիտակ փայլուն և խիստ կարծր թաղանդն, որ ձեւացած է զրեթէ ամիսդապէս խորձերից առաւել կամ պակաս սեղմուած սպիտակ նրբամելերով: Մենք վերևում այդ բառը ՆԵՐԴՐՈՒԹ Ե-ՇՆ-Դ թարգմանեցինք վերըմբանողութեան համար, բայց հարկաւոր նոր համարում ասել, որ այդ բառի Հայերէնն է մէջն:

(\*) Բառ Լատինական: զանգղիսն: ըստ մեկնաբանութեան Ըարսալի Գաղղիական բառարանի, նշանակէ ջղային նրբամելերի կամ մի հասարակ թաղանդում փաթաթուած և հիւսուած երակների կծիկ:

այդ է աղայարտիուն անցն՝ որ պարունակում է իւր մէջ կլսու ունետու դէվն \*):

Մասնաւոր խորաններում, որպէս թէ հազցրած երեսի և գանգի ոսկրների մէջ երեւում են բեռաւնեան, լոռունեան և հոգտունեան կաղմոււածքն: Այդ կաղմոււածոյ ներքոյ և վերջինի (հոգտութեան) թագուցած խոսոչի հաղորդակցութեամբ բացվում է բերանն, ուր է ճաշակի և խօսքի գործին: Բերանից գնում է մի անցք, որ իջանում է պարանոցի երկայնութեամբ ողնայարական սեան առաջից և առաջնորդում է բունչ մեծ իռառնչ մէջ: Այս վերջինս իւր բարձրութեան կիսումն բաժանուած է մի մուսկուլական — ապօնէվրօարիկական անջրապետով, Ֆլուամորը (diaphragme), որ սահման է գնում բունի կամ լանջի (thorax) վերագոյն մասի և ստորին մասի կամ իորի մէջ տեղ և բաժանում է իորջին կամ լանջին խուռան՝ սրույնից կամ իորոյին (abdominal) խոսոչից: Կուրծքի մէջ զրուած են թօքերն և սիրան, որք են զլսաւոր օրգանք շնչառութեան և շքանառութեան: Փորն պարունակում է իւր խոսոչի մէջ աղզի աղզի կաղմոււածքներ, որոնք սահմանուած են կաղմելու ստածման տարերքն և անջատելու արիւնից զլսաւոր կղկղանքն:

Թառքերն հաղորդակցում են բերանի հետ մի երկար խողովակով — խռախռով (tracheo—artere), որոյ ծայրն ձեւացած է լը-

լարինք (larynx), որ է օրգան ձայնի: Խըռաշափողի և թոքերի ետեն իջանում է մի այլ խողովակ, որին՝ որ յետնաբերանից գնալով և միջնամորթի միջեց անցաներով հասնում է փորին:

Մենք այժմ մի ընդհանուր գաղափար ունեցանք մարդկային մարմնի վերայ յարտաքուստ դէպ ի ներքուստ: Եւ եթէ հաճայ լիցի “Արարատայ”, մեր ընթերցող եղանց, մենք կարգաւ և մանրամասնաբար կը ջանամք միւս տեարակներում հետեւել լնատոմիայի բաժանմանց, ուստի նելով նորան վերաբերեալ Փիզիոլոգիական երևոյթներն:

Թուրք է Գորդուին:

ՀԱՄԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵՊԱՅ

Ի ԴԵՐԵՒ:

### ԴԱՍՏԵՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՀԵՅՈՅ.

ՀԱՅՈՒԱԾ

Մանկուպետրուրդ մայրաքաղաքի ցանկապատ խուիզների, և նորա շրջակայ դաշտորեից անդաստանների մէջ կան անհամար լայնատարած պարտէզներ, ուր բունում են բազմատեսակ բանջարներ, խաւարներ և այլ գետնաբօյսք, բայց ոչ ամենայն՝ բացօթեայ, շատ ծաղկունք, շատ կանանց զէնք, շատ թռւփեր պահանջում են, որ առաջ սերմաննվին և տնկվին ապակեայ տանեաց ծածկոյթների տակ ջերմկաց մէջ. վարունգը, և քաղցր բողիք անդամ՝ ջերմացուցած տեղերումն են գարունն անցուցանում: Բայց երկնքի տակն գոյանում են կաղամբ, շղթամ, բողկ, գետնափնձոր, քարթոֆիլ, սոխ,

(\*) Գլղ. moelle, այս ինքն մեծ ոսկրների խոռոշների մէջ եղած կակուղ և ճարպաւոր հիւթանիւթն: